# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ
# ՈՐՈՇՈՒՄ

<<28>> հոկտեմբերի 2015 թվականի N226-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77.1-ին և 77.2-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N 1/32.1/15727-15 հանձնարարականը՝

որոշում եմ

1. Հաստատել 2015 թվականի հոկտեմբեր ամսին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատանի համայնքում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2015 թվականի հոկտեմբերի 27-ի N 1/32.1/15727-15 հանձնարարականով ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին առընթեր հատուկ կարևոր գործերով ավագ քննիչի կողմից առաջադրված հարցաշարով:

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Ազատան համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2015 թվականի հոկտեմբերի 28 թիվ 271-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան համայնքում իրականացվելիք վարչական հսկողության հարցաշարը, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| Համայնքի անվանումը | Իրականացվելիք վարչական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք վարչական հսկողության հարցաշարը | Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձի | |
|---|---|---|---|---|
| | | | զբաղեցրած պաշտոնը | անունը, ազգանունը |
| Ազատան | 30.10.2015թ.-04.11.2015թ. | 2008 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում քանի անձ է դիմել Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարան իրենց դրամական օգնություն տրամադրելու կամ ուսման վարձը փոխանցելու հարցով, նրանցից քանիսի դիմումներն են բավարարվել, ինչ կարգով և որքան գումար է վճարվել կամ փոխանցել գյուղապետարանը վերոհիշյալ նպատակներով: Հիշյալ գործընթացի ժամանակ պահպանվել են արդյոք ոլորտը կարգավորող օրենքների և նորմատիվ ակտերի պահանջները: Եթե առկա են չհիմնավորված վճարումների, փոխանցումների և խախտումների դեպքեր, ապա ինչ դեպքեր են դրանք և ինչ չափի գումարի վերաբերյալ են: | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, խմբի ղեկավար | Ռուբեն Հարությունյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ, խմբի անդամ | Հովհաննես Օհանյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Սուրեն Ավետիսյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Զարիկ Մուրադյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Արմեն Հարությունյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Վարդան Սահակյան |
| | | 2008 թվականից նոյեմբերի 15-ից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ (ըստ տարիների) Ազատանի գյուղապետարանը քանի ծառայողական ավտոմեքենա է ունեցել, որքան գումար է նախատեսվել դրանց շահագործման և սպասարկման համար, որքան է փաստացի ծախսվել և ինչ նպատակով: Ծախսերը համապատասխանում են արդյոք սահմանված նորմատիվներին և առկա են արդյոք դրանք հիմնավորող փաստաթղթեր: Եթե կան չհիմնավորված ծախսերի դեպքեր, ապա ինչ դեպքեր են դրանք և ինչ չափի գումարի վերաբերյալ են: | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, խմբի ղեկավար | Ռուբեն Հարությունյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ, խմբի անդամ | Հովհաննես Օհանյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Համազասպ Մարտիրոսյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ | Զարիկ Մուրադյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Արմեն Հարությունյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Վարդան Սահակյան |
| | | 2008 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ (ըստ տարիների) Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարանը կատարել է արդյոք անապրանք գնումներ, եթե այո որ կազմակերպություններց, ինչ ապրանքների և որքան գումարի չափով գնումների մասին խոսքը: | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, խմբի ղեկավար | Ռուբեն Հարությունյան, |
| | | | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ, խմբի անդամ | Հովհաննես Օհանյան, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 2008 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ (ըստ տարիների) Շիրակի մարզի Ազատանի գյուղապետարանը ավտոմեքենաների համար որքան գուքահարկ է հավաքագրել և հավաքագրած գումարներից որքանն է մուտքագրել համայնքի բյուջե: Եթե հավաքագրված և համայնքի բյուջե մուտքագրված գումարների միջև առկա է տարբերություն, ապա որքան է կազմում այդ տարբերությունը: Հիշյալ տարիներին ավտոմեքենաների գույքահարկ զիջվել է կամ պակաս գանձվել է թե ոչ, եթե այո ինչ հիմքով է դա արվել և կատավել է արդյոք ոլորտը կարգավորող օրենքների և նորմատիվ ակտերի պահանջ - ներին համապատասխան: | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ, խմբի անդամ<br><br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ<br><br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ, խմբի անդամ | Զարիկ Մուրադյան,<br><br>Արմեն Հարությունյան,<br><br>Վարդան Սահակյան |
| | | 2008 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2013 թվականի հոկտեմբեր ամիսը ներառյալ Շիրակի մարզի Ազատանի համայնքի ղեկավարը ինչ հողամասեր և շենք-շինություններ է օտարել: Ստուգել ինչպես օտարման գործարքների ոլորտը կարգավորող օրենքներին և իրավական ակտերին համապատասխանության, այնպես էլ օտարումից գոյացած գումարները և այլ վճարները համայնքի բյուջե մուտքագրվելու հանգամանքները: | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ, խմբի ղեկավար<br><br>Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի պետ, խմբի անդամ<br><br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ, խմբի անդամ<br><br>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնգետ, խմբի անդամ | Ռուբեն Հարությունյան,<br><br>Հովհաննես Օհանյան,<br><br>Զորիկ Խաչատրյան,<br><br>Հուրիկ Մարտիրոսյան |

Ծանոթություն – Վարչական հսկողության արդյունքներով խախտումներ հայտնաբերվելու դեպքում նշել խախտում կատարած կոնկրետ պաշտոնատար անձանց կամ աշխատակիցների տվյալները, ինչպես նաև խախտման հետևանքով համայնքին և այլ անձանց պատճառված վնասի չափը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է